

ԸՆԿԵՐԱՅԻՆ ՑԱՆՑԵՐՈՒ ԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆԱՓՈՎՈՒՄ

Արաբական Միացեալ Էմիրութիւնները եւս կայացուց ընկերային ցանցերու գործածութիւնը սահմանափակող որոշում: Ապու Տապիի կառավարութեան վաւերացուցած որոշումը կ'արգիլէ 15 տարեկանը չամբողջացուցած երեխաներուն ընկերային ցանցերու գործածութիւնը: Ուստի, անոնք այսուհետեւ պիտի չկարենան ստեղծել կամ գործածել անձնական հաշիւներ, բովանդակութիւն հրապարակել եւ մեկնաբանութիւններ գրել: Ընկերային ցանցերը տնօրինող ընկերութիւններն ալ այժմ պէտք է յայտնաբերեն եւ չեղարկեն կանոնադրանք հաշիւները:

ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ ԱՆՎԱԻԵՐ ՃԱՆՉՆԱԼՈՒ ԴԻՄՈՒՄՆԵՐ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան հերքեց, թէ իշխանութիւնները կը պատրաստուին նոր ընտրութիւններու: Ան պնդեց, որ ընդդիմութեան օգտին բուռնացողներուն 70 առ հարիւրը այդ քայլին դիմած է ընտրակաշառք ստանալու դիմաց: Ընտրութիւններուն վերջնական արդիւնքներուն հրապարակումէն ետք, ընդդիմադիր շարք մը կուսակցութիւններ դիմումներ ներկայացուցին Սահմանադրական դատարան՝ բողոքելով ընտրական արդիւնքներէն եւ պահանջելով անվաւեր ճանջնալ զանոնք կամ կազմակերպել երկրորդ փուլ: Երէկ, Սահմանադրական դատարան ներկայացան «Բարգաւաճ Հայաստան», «Միասնութեան թեւեր», ԴՕԿ կուսակցութիւնները, «Հայաստան» եւ «Ուժեղ Հայաստան» դաշինքները: Նշեց, որ Սահմանադրական դատարանը պարտաւոր է գործը քննել եւ որոշում կայացնել դիմումի ներկայացումէն առաւելագոյնը 15 օր ետք: «Ուժեղ Հայաստան» դաշինքի առաջնորդ Սամուէլ Կարապետեան յայտնեց, որ ինք աշխատանք կը տանի միաւորելու ընդդիմութիւնը եւ կազմակերպելու բողոքի հանրահաւաք: Անջապահ զատարանին վճիռով երէկ որոշուեցաւ ընդդիմադիր «Հայաստան» դաշինքի թեկնածուներէն Ռուսլան Բարսեղեանը երկու ամիս կալանաւորել, իսկ Նոյն դաշինքի թեկնածուներէն Ասատուր Զոհարեանին նկատմամբ սահմանել տնային կալանք: Կեդրոնական ընտրական յանձնաժողովը նախապէս համաձայնած էր նաեւ նախկին նախագահ Ռուպերտ Զոհարեանի նկատմամբ քրեական հետապնդումի դիմումին: Իսկ «Ուժեղ Հայաստան» դաշինքի թեկնածուներէն Աշոտ Եղիազարեանը կալանաւորուեցաւ՝ հարիւրէ աւելի ընտրողի ընտրակաշառք տալու յանցանքով:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆԸ՝ ՕՐԱԿԱՐԳԻ ՎՐԱՅ



Ընտրութիւնները յաղթած վարչապետ Նիկոլ Փաշինեանի «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցութիւնը արդէն կը նախապատրաստուի խորհրդարանի յաջորդ գումարումին: Խմբակցութեան քարտուղար Արթուր Յովհաննիսեան շեշտեց, որ Հայաստանի նոր Սահմանադրութիւնը վաւերացնելու օրակարգը պիտի չյետաձգուի, թէեւ յառաջացած են որոշ դժուարութիւններ: «Մենք

պիտի չշեղուինք օրակարգէն եւ անոր համար պիտի գտնենք իրական լուծումներ», ըսաւ Յովհաննիսեան: Նշեց, որ Սահմանադրութեան փոփոխութիւնը կը համարուի յաջորդ փուլի վիճարկոյց զխաւոր նիւթերէն մէկը եւ կը սպասուի, որ ընտրութիւններուն սահմանադրական մեծամասնութեան չտիրացած իշխանութիւնը այս հարցով դիմագրաւէ խնդիրներ: Իսկ խմբակցութեան երեսփոխաններէն Ալիսա Ղազարեան յիշեցուց, որ 2021-ի ընտրութիւններուն իրենց ստացած են 680 հազար ըուէ, իսկ այժմ՝ 728 հազար: «Հարեան երկիրները, ուզեն թէ չուզեն, հաշուի պիտի ստանան Սահմանադրական դատարանի որոշումին հետ», ըսաւ Ղազարեան, անուղղակիօրէն մեկնաբանելով Ազգային ժողովի ընտրութեան արդիւնքները չճանջնալու Մոսկուայի պաշտօնական դիրքորոշումը: Ռուսիոյ պետական տուժալի մէջ ԱԳՀ պետութիւններուն հարցերով զբաղող կոմիտէի նախագահի տեղակալ Կոնստանտին Չաթուրի շեշտեց, որ Մոսկուա պէտք է հայկական ընտրութիւններուն վերաբերեալ որդեգրէ սկզբունային դիրքորոշում, շարունակէ գործնականօրէն աշխատիլ իշխանութիւններուն հետ, սակայն առանց պաշտօնապէս ճանջնալու արդիւնքները: «Կարելի չէ ընտրութիւնները ամբողջութեամբ ժողովրդավարական եւ միջազգային չափանիշներուն համապատասխանող համարել, որովհետեւ բացակայած են քաղաքական մրցակցութեան պայմանները եւ ճշում բանեցումը եւ ընդդիմութեան նկատմամբ», ըսաւ ռուս երեսփոխանը:

TRIPP-Ը ԳՈՐԾԱԴՐԵԼՈՒ ՄԻՏՈՒՄ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան շեշտեց, որ անհրաժեշտ է արագ գործել տարածաշրջանային հաղորդակցութիւններու TRIPP ծրագիրը գործադրելու համար, մանաւանդ որ ամերիկեան կողմէն յատկացուած է գումար: Միւս կողմէ, Ատրպէյճանի նախագահ Իլիւհամ Ալիեւ հերթական ամբաստանութիւնները յղեց Հայաստանին՝ «ատրպէյճանական տարածքներու բռնազաւթումի ատեն ոճրագործութիւններ կատարելու» ամբաստանութեամբ: Անոր համաձայն, հայերը կործանած են 65 մզկիթ, իսկ Պաքոն ինքն է, որ խաղաղութիւն առաջարկած է Երեւանին: «Արեւմտեան Ատրպէյճանի համայնքի խորհուրդ»-ի ներկայացուցիչ Ազիզ Ալեքաբերի իր կարգին պահանջեց, որ Երեւան յարմար պայմաններ ստեղծէ՝ «արեւմտեան ատրպէյճանցիներու» անվտանգ վերադարձին համար: Թուրքիոյ եւ Ատրպէյճանի զինուած ուժերու ղեկավարութիւնները գումարեցին ռազմական համագործակցութեան զարգացումին նուիրուած ժողով մը, որուն աւարտին ստորագրեցին աշխատանքային արձանագրութիւնը: Ըստ տեղական լրատուամիջոցներուն, թրքական պատուիրակութիւնը ստուգած է ատրպէյճանական զօրամասերէն մէկուն կազմակերպութեան ծրագիրը:

ԶՍԿՍԱԾ ԲԱՆԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՅԵՏԱԶԳՈՒՄ

Միացեալ Նահանգներու եւ Իրանի միջեւ յայտարարուած փոխըմբռնումի յուշագրին հիման վրայ կայանալիք բանակցութիւնները տակաւին չսկսած յետաձգուեցան: Զուիցերլիոյ Արտաքին գործերու նախարարութիւնը երէկ յայտարարեց, թէ Ուաշինկթընի, Թեհրանի, Տոհայի եւ Իսլամապատի ներկայացուցիչներուն բանակցութիւններուն նախապատրաստութիւնները չեն ամբողջացած, ուստի յետաձգուած են: Ամերիկեան Սպիտակ տունն ալ յայտարարեց, թէ Իրանի հետ տակաւին կարելի չէ եղած համաձայնիլ բանակցութեան ծրագրին շուրջ: Նախագահ Տոնըլտ



Թրամի յայտնեց, որ յուշագրին ստորագրութիւնը Թեհրանի համար պարտութիւն էր, որովհետեւ ամբողջութեամբ կործանուած են Իրանի զինուորական կարողութիւնները: Նախագահը շեշտեց, որ Իրանի հետ բանակցած էր, որպէսզի միջազգային տնտեսութիւնը չկրէ անդառնալի վնասներ: Թեհրան իր կարգին սպառնաց քաշուիլ ամերիկացիներուն հետ բանակցութիւններէն, եթէ Իսրայէլ չհրադրեցնէ գործողութիւնները Լիբանանի մէջ եւ չյարգէ ամբողջական զինադադարի որոշումը:

ԲԻՒՐ ՅԱՐԳԱՆՔ ՀՆՉԱԿԵԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Կազմակերպութեամբ Սոցիալ Դեմոկրատ Յնչակեան Կուսակցութեան Լիբանանի շրջանի Վարիչ մարմինին, լիբանանահայութիւնը երէկ երեկոյեան ոգեկոյզեց Յնչակեան նահատակներու յիշատակի օրը: Սին Էլ Ֆիլի քաղաքապետարանի սրահին մէջ կայացած հանդիսութեան ներկայ էին Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Տ. Շահէ արք. Փանոսեան, ՍԱՀՄԵՄ կեդրոնական մարմինի ատենապետ վեր. Հրայր Չոլաքեան, հոգեւոր հայրեր, կուսակցութեան ղեկավարութիւնը եւ քոյր կուսակցութիւններու առաջնորդներն ու ներկայացուցիչները, պաշտօնական հիւրեր, քաղաքապետական խորհուրդ:



ներու անդամներ, միութիւններու ներկայացուցիչներ, բազմաթիւ հնչակեաններ եւ լիբանանահայեր: Այս առթիւ խօսքեր արտասանեցին ՍԴՀԿ Կեդրոնական վարչութեան անդամ ընկ. Ալեքսան Զեյնալեանն ու կուսակցութեան Լիբանանի շրջանի Վարիչ մարմինի ատենապետ ընկ. Վանիկ Տազետեանը, որոնք անդրադարձան հայկական դատին հնչակեաններու անսակարկ նուիրումին, նահատակներուն պատգամին, ինչպէս նաեւ լիբանանեան եւ հայկական մերօրեայ կարեւոր նիւթերուն: Հանդիսութեան ընթացքին մատուցուեցաւ նաեւ գեղարուեստական յայտագիր: Հնչակեան նահատակներու յիշատակի ոգեկոյզումին հանդիսութեան եւ արտասանուած խօսքերուն մանրամասնօրէն կ'անդրադառնանք յառաջիկայ երեքշաբթի օրուայ «Արարատ»-ի թիւով:

ԱՐԻՒՆԱԼԻ ՕՐ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ

Ամերիկեան-Իրանեան յուշագրի ստորագրութենէն ետք Լիբանանի մէջ իրավիճակը ոչ միայն չհանդարտեցաւ, այլ 19 Յունիսը դարձաւ այս պատերազմին ամենէն արիւնալի օրերէն մէկը: Հարաւի եւ Պաալպաքի շրջանին մէջ բազմաթիւ թիրախներու ռմբակոծութեան հետեւանքով, երէկ Լիբանանի մէջ մահացաւ առնուազն 47 հոգի, վիրաւորուեցան առնուազն հարիւր անձ: Իսրայէլեան բանակը մագլցողական յարձակումները պատճառաբանեց հարաւի մէջ տեղակայուած իր ուժերուն դէմ Յուզպալլայի գործողութիւններու բազմացումին, նշելով որ իր զինուորներէն չորսը



երէկ մահացած են հարաւի բախումներուն ընթացքին, ուրիշներ ալ վիրաւորուելով տարահանուած են մարդիկ դաշտէն: Բախումները երէկ կեդրոնացան Նապաթի գաւառի Ալի Թահեր բարձունքին վրայ, որուն կը փորձէ տիրապետել իսրայէլեան բանակը, նախքան որեւէ զինադադարի գործադրութիւնը: Իսրայէլի վարչապետ Պենիամին Նեթանիախո յայտնեց, որ բանակին հրահանգած է հարուածել Յուզպալլայի արեւի քան 150 թիրախ: Հանրապետութեան նախագահ ժողգէ Լուլս յայտնեց, որ հարաւի եւ Պեշաայի մէջ երէկ տեղի ունեցածը կը համարուի վտանգաւոր եւ դատապարտելի մագլցում մը, որ պէտք է անյապարդ դադրեցնել: Վարչապետ Նաուաֆ Սալամն ալ շեշտեց, որ պետութիւնը պէտք է ըլլայ իր որոշումին տերը,



աւելցնելով որ բանակցելու իրաւունքը վերապահուած է Լիբանանի սահմանադրական հաստատութիւններուն, որոնք պէտք է վայելեն զեկի մեծաշնորհը: Յուզպալլայէն պատասխանատուներ վստահեցուցին, որ իրենք բոլոր նախապատրաստութիւնները ամբողջացուցած են շարունակելու մարտերը, եթէ իսրայէլեան կողմը շարունակէ իր ոտնձգութիւնները: Յուզպալլա պատրաստակամութիւն յայտնեց յարգելու զինադադարը, եթէ միւս կողմը եւս յարգէ զայն:

ԶԱՅՆԵՐ ՅՈՒՆԱՍՏԱՆԷՆ

(արձագանգ հայկական կեանքի) - 2

ՖԻԶՍԻ (Աթէնք) «Արամ Մանուկեան» ակումբի սրահին մէջ, 30 Մայիսի գիշերը, բանախօսութեամբ, գեղարուեստական յայտագրով ու սեղաններու շուրջ սարքուած խնձոյք-խրախճանքով տոնախմբուած է Հայաստանի Ա. Հանրապետութեան անկախութեան 98-րդ տարեդարձը, նախաձեռնութեամբ Յ.Յ.Գ. Յունաստանի երիտասարդական Միութեան: Կազմակերպիչ մարմինի անունով ուղերձ մը կարդացած է Վահրամ Չաքալեան: Գլխաւոր բանախօս Արման Գրիգորեան (Յ.Յ.Գ. Կեդրոնական կոմիտէ) անդրադարձած է անկախութեան գաղափարին: Համագայիսի «Նանօ» պարախումբը, պատանեաց երգչախումբ մը ու հնգանդամ նուագախումբ մը խանդավառ մթնոլորտ ստեղծած են սրահին մէջ:



(Շարունակութիւնը տեսնել էջ 2)

Ապրեցնող Եւ Ոգեշնչող Անցեալը՝ Ներկայով

ՅՈՒՇԱԳՐԱԿԱՆ-ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ «ԿԵՆ ԴԱՆԱՅՈՒՄ»-Ի ԿԱՐԳՈՎ

ՊԱՐՈՅՐ Յ. ԱՐՊԱՇԵԱՆ

Նորորեայ ու նորժամանակեայ հայ ժողովուրդի պատմութիւնը, բազմատեսակի ու բազմաբնոյթ ճիւղերով, հսկայ են արժեքաւոր եզակիութիւն մըն է, որ ցոյց կու տայ հայութեան գոյութեան եւ յարատեւման ճոխ ու բեղուն երեսներն ու փուլերը, իրենց յաջողութիւններով եւ յաղթանակներով, սիրագործութիւններով ու հերոսութիւններով, նուաճումներով եւ իրագործումներով, հերոսներով ու տեսլապաշտներով, նոյնիսկ իրենց ձախողութիւններով ու թերացումներով, պարտութիւններով եւ անկումներով, տատանումներով եւ խարխափումներով, ելեւէջներով ու վերիվայրումներով:

Այդ բոլորը ցոյց կու տան հայութեան խայտաբղետ կեանքը, տարատեսակ ապրելակերպը, դիմագրաւած մարտահրաւերները, ինքնութեան ոլորտները, նկարագրային յատկութիւնները, աստիճանային ժամանակութիւնները, հաւատքի արմատները, մարտնչումի ուժակալութիւնները, հայրենապաշտպանութեան կառչածութիւնները, եւ ընդհանրապէս ինքնապաշտպանութեան եւ ինքնագոյութեան հիմունքները:



Ասոց կողքին կը յայտնուին նաեւ հայոց մշակութային, գրաշխարհային, արուեստաշէնային, ստեղծագործային, ազգակերտային, հայապահպանային ու մարդկային հոգեզգացական հայաշխարհային ու ներաշխարհային ԳԱՆՁԱՅԻՆ աղբիւրներով յորդառատ հարստութիւններ, որոնք կը կազմեն բացառիկ, անզուգական եւ անկրկնելի բարեմասութիւններով օժտուած «ուկեայ շրջաններ»:

Ի գուր տեղ չէ, որ հայ ժողովուրդը, ասանդակաւորեալ ու պատմականօրէն դատուած ու ճանչցուած է իր համայնական, ընդհանրական եւ ինքնակերտական արժանիքներով, ուր իր կրօնական հաւատամքը, ազգագրական եւութիւնը, ստեղծագործական լինելիութիւնը, մարտունակութիւնը, անկախական ձգտումները եւ ազատագրական փորձերը զինք պահած են կենդանի ու կանգուն, այն հաւատքով ու վճռակամութեամբ, որ ան չի կրնար անեանալ կամ աներեւոյթանալ աշխարհէն, ոչ ալ կրնայ ջնջուիլ քարտէսէն:

Ահաւասիկ հիմնահարցեր եւ եախնդիրներ, որոնք հայ ժողովուրդին համար դարձած ու մնացած են անվիճելի եւ անկորչելի ամրակուտ հրամայականներ:

Սակայն, երբ այս կարգի թուումներ կը կատարենք, կ'արձանագրենք կամ կը բացայայտենք, ինքնին նշանակելի կը դառնայ, որ հայ ժողովուրդի տարողութեամբ, հեղինակութեամբ ու վաստակաշատութեամբ «համեմուած» ազգութիւն մը ինչպէ՛ս կրցած է իր գոյութիւնը պահել-պահպանել, աճիլ-համակերպիլ, կազմակերպուիլ-ստեղծագործել, քաջ գիտնալով ու հաւատալով, որ այ՛դ է իր ճանապարհը, ուղին եւ ապագան:

Եւ ասոնք, հոգ չէ թէ ան մերթ ընդ մերթ զրկուած եղած է անկախական գոյերթէն, պետական կարգավիճակէն կամ ազատական ընտրանքէն, բայց շնորհիւ իր կամքի հզօրութեան, ապրելու տենչին ու գոյատեւելու անփոխարինելիութեան, ան մնաց իր «ազգային կանչ»ին հարազատ կրողը եւ արձագանգողը, ընդ հովանեաւ ԱԶԳԱՅԻՆ ելեւ-դեցուլ առաջնորդութեան, պաշտպանութեան ու հոգատարութեան:

Թերեւս այս էր պատճառը, որ հայ ժողովուրդը, առանց ընկրկելու, նահանջելու կամ անձնատուութեան, ոչ միայն մնաց պատենչի վրայ, այլ՝ որոնեց ու գտաւ այն ճանապարհները, որոնք զինք կ'առաջնորդէին, կը պատասպարեն ու կը զօրակցին անայլայլ, անխռով եւ անփոփոխ շարժերով:

Անշուշտ, երբ լուսարձակի տակ կ'առնուի հայ ժողովուրդին դժուարին, այլապէս քարքարոտ ուղին, պարզ կը դառնայ, որ ան ինչպիսի՜ որոգոյթներ, դաւաճանութիւններ եւ դարանակալութիւններ են անցած է, բայց կրցած է այդ բոլորին նկատմամբ «որդեգրել» հայու անկոտորում կամք եւ անխառն կեցուածք, միշտ հարազատ ու կառչած մնալու համար իր ազգային-հայրենական ինքնութեան:


Կասկած չկայ, որ հայ ժողովուրդին գոյակեցութիւնը չէ եղած հեզասահ, ոչ ալ դիրահունչ, բայց նոյնքան ալ յստակ է, որ ան երբեք անձնատուր չէ եղած ներքին թէ արտաքին ճնշումներուն, խեղդոցներուն եւ օղակումներուն, որոնք կը սպառնային ոչ միայն իր գոյութեան, այլ անելին՝ անոր ողնջացման, անհետացման եւ անեացման:

Յետեւաբար, եթէ հայ ժողովուրդը այն քիչերէն է, որ կրցած է դիմադրել ու պայքարիլ նման ծրագրուած ու կազմակերպուած գրոհներու եւ յարձակումներու դէմ, ասի-

Հարունակութիւնը տեսնել էջ 4

ԶԱՅՆԵՐ ՅՈՒՆԱՍՏԱՆԷՆ

(Շարունակուած էջ 1-էն)



ԱՅԵՆԵԻ «Ազատ Օր» օրաթերթին մէջ լոյս ընծայուած յօդուածով մը (29-30 Մայիս), խմբագիր Զեորը Էքիզեան լուսարձակ բացած է յունահայոց գրական ու կրթական կեանքի երբեմնի նուիրեալ դէմքերէն **Սօս-Վանիի** (թուն անունով՝ Կարապետ Յովհաննէսեան) վաստակին վրայ: Սօս-Վանին մահացել է ճիշդ 60 տարի առաջ՝ 28 Մայիս 1966-ին, Աթէնքի հիւանդանոցներէն մէկուն մէջ: Յօդուածագիրը ցաւ կը յայտնէ, որ Վասպուրականի Շատախ գաւառի ծնունդ այս բեղուն գրիչը այսօր «մոռացութեան մէջ ինկած է, անհետացած է»...:

Յետոյ ան կ'անդրադառնայ անոր անտիպ գործերուն, ձեռագրերուն, պատմելով անոնց ճակատագրին վերաբերեալ հետեւեալ դրուագը.-- Սօս-Վանիի մահէն երեք ամիս ետք, յունահայ ծանօթ մտաւորական Օննիկ Չաքարեան կ'այցելէ ողբացեալին տունը ու անոր այրիին արտօնութեամբ խղճմտօրէն կը ցանկագրէ հեղինակին անտիպ գործերուն ու ձեռագրերուն ամբողջական ցուցակը: Նամակով մը՝ Չաքարեան այս մասին կը տեղեկագրէ Պէյրուքի Նշան Փայլանճեան Ճեմարանի տնօրէն Սիմոն Վրացեանին, առաջարկելով Սօս-Վանիի գրական այդ ամբողջ թողոնը Յունաստանէն ստուկով մը դրկել Լիբանան (Յամազգա-իւնի արխիւ), հրատարակութեան նպատակով: Իր այս առաջարկը ան կը կրկնէ քանիցս՝ Սօս-Վանիի գործերը կորուստէ փրկելու անկեղծ մտահոգութեամբ: Վրացեան, սակայն, կը թելադրէ թղթապանակը դրկել հոնորարային Յայաստան...: Ծրագիրը, այսպիսով, կ'առաջադրէ: Արդ, վաթսուն տարի անց, Սօս-Վանիի այդ թուղթերը ի՞նչ եղան, դառնութեամբ եւ փոստանքով հարց կու տայ Զ. Էքիզեան: Ան կը գրէ. «Յայտնի չէ, թէ ի՞նչ պատահեցաւ անկէ ետք: Ո՛ր մնացին գործերը, որո՞նց մօտ պահուցան: Արդե՞օք Չաքարեան զանոնք իր հետ տարաւ Պէյրուք (1967-ի վերջերը) եւ յանձնեց ճեմարան: Պէ՛տք է որոնել: Արդե՞օք մնացին իր այրիին ձեռ ու կորստեան մատուցեան: Արդե՞օք տարբեր կարգադրութիւն մը եղած է»: Յօդուածագիրը միաժամանակ դիտել կու տայ, թէ Յունաստանի մէջ ատոնց հետքը չգտաւ...: Ու «Ազատ Օր»-ի էջերուն՝ ան կը հրատարակէ Օննիկ Չաքարեանի կողմէ ցուցակագրուած Սօս-Վանիի անտիպներու ցանկը, որ կը բաղկանայ 35 անուն այլաբնոյթ գործեր, հետաքրքրական վերնագրերով ու հազարաւոր էջերով...: Հոն ծանր կը կշռեն մահաւանդ հայրենական հեքիաթները, ասանդագրոյցները, առասպելները, ազգագրական պատումները, վիպերգերը եւ Վասպուրական աշխարհի առնչուող գաւառիկ նիւթերը, որոնցմով կը շնչէր ու կ'ապրէր Սօս-Վանին...: Իրա՛ւ ալ, ի՞նչ մեծ կորուստ է՝ եթէ մեծդի այդ թողոնը կորսուի եւ կամ փճացի...:


ԱՅԵՆԵԻ մէջ, վերջերս (2026), լոյս տեսած է հայ բանաստեղծութեան ընտիր նմոշներու յունալեզու ծաղկաքաղ մը, որ կը կրէ «**Յայկական քնար. ձայն եւ արձագանգ**» խորագիրը: Հատորը տպագրուած է «Արմենիքա» յունալեզու հայկական պարբերաթերթին մատենաշարով, որպէս այդ շարքին 20-րդ գիրքը: 274 էջանի նորատիպին մէջ ընդգրկուած քերթուածներուն ամբողջական թարգմանութիւնը (հայերէն-յունարէն) կատարած է յունահայ գաղութի երեց մտաւորականներէն Արա Մանկոյեան, անշուշտ նպատակ ունենալով հելլէն հասարակութեան եւ գրական շրջանակներուն ծանօթացնել հայ բանաստեղծութիւնը: Թարգմանիչը իր ընտրութիւնը կատարած է թէ՛ արեւմտահայ ու թէ՛ արեւելահայ քերթողներէ, բծախնդրօրէն ու վարպետութեամբ իրագործելով թարգմանական դժուարին աշխատանք մը: Արա Մանկոյեան տարիներէ ի վեր աչքի լոյս թափած է երկարաշունչ այլ երկի մը վրայ ալ, որ Նարեկացիի «**Մատեն ողբերգութեան**» աղօթազգիրքին յունարէն թարգմանութիւնն է: Կը սպասուի, որ մօտիկ ապագային ատիկա եւս արժանանայ տպագիր հրատարակութեան:

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ Հայոց թեմի առաջնորդը՝ Սահակ Եպս. Եմիշեան, վերջերս, փիլիսոփայութեան դոկտորական աստիճանի վկայական ստացած է Միացեալ Նահանգներու Ֆորտհամ համալսարանէն: Սրբազանը, որ ներկա-

յիս 43 տարեկան է, երկու տարիէ ի վեր կոչուած է Յունաստանի թեմակալ առաջնորդի պաշտօնին: Նախապէս, ան հոգեւոր ծառայութիւն կը բերէր Միացեալ Նահանգներու Արեւելեան թեմէն ներս: Իդէպ, Սահակ Եպս., ի տարբերութիւն միաբանակից իր եղբայրներուն, ծնունդով հայաստանցի է: Պրոֆայայի Դպրեվանդը ասարտել է ետք կուսակրօն քահանայ ձեռնադրուած էր 2006-ին:




ԹԵՍԱՂՈՆԻԿԵԻ մէջ, վերջերս (2026), տեղւոյն համալսարանի պոնտական ուսմանց բաժանմունքը լոյս ընծայած է 660 էջանի յունարէն հաստափոր հատոր մը, որ կը կրէ «**Յեղասպանութիւնները Օսմանեան կայսրութեան տեւողութեան, հայեր, ասորիներ եւ յոյներ, 1913-1922**» խորագիրը: Գիրքը տարբեր հեղինակներու հաւաքական աշխատանքի արդիւնք է, կազմուած ու խմբագրուած՝ ճորճ Ն. Շիրինեանի կողմէ: Հատորը թարգմանութիւն է անգլերէնէ եւ կրնայ գոհացնել ցեղասպանական արարքներ նուսումնասիրող գիտական կամ ակադեմիական շրջանակները:



ՅՈՒՆԱՍՏԱՆԻ մէջ Հայաստանի դեսպանը՝ Տիգրան Մկրտչեան, վերջերս, անկիպում ունեցած է Աթէնքի համալսարանի վերատեսուչի տեղակալ փրոֆ. Սոֆիա Փափայոնանուի հետ եւ միասնաբար քննարկած հայ-յունական կրթական համագործակցութեան հայոյց հարցեր: Ըստ դեսպանատան լրատուութեան՝ «**գրուցակիցները քննարկել են նաեւ Աթէնքի համալսարանում հայերէնի, ինչպէս նաեւ Հայաստանում ժամանակակից եւ հին յունարէնի դասաւանդման հետ կապուած հարցեր**»: Դեսպան Մկրտչեան **ԱԼԵՔՍԱՆՏՐՈՒՊՈՒՆՈՅ** մէջ ալ (Թրակիոյ շրջան, հիւսիսային Եգեականի ափին, Թուրքիոյ ասիական ոչ-հեռու) տեսակցութիւն մը ունեցած է տեղւոյն քաղաքապետին ու նաւահանգիստի տնօրէնին հետ: Այս վերջինը իր ղեկավարած նաւահանգիստը ներկայացուցեր է որպէս Յունաստանը, Պուկարիան եւ Թուրքիան իրարու կապող ռազմավարական կարեւոր հանգրձ: Իսկ հայ դեսպանը փափաք յայտնած է սերտել Հայաստանէն Եւրոպա արտահանուող բեռները այս նոյն նաւահանգիստին վրայով տեղափոխելու կարելիութիւնները: Հայ դեսպան այլ հանդիպում մըն ալ ունեցած է Արեւելեան Մակեդոնիոյ ու Թրակիոյ մարզապետին հետ: Հոս ալ քննարկուել են Հայաստանի Շիրակի մարզը Յունաստանի Թրակիոյ շրջանին հետ «գործընկեր» դարձնելու հնարաւոր հեռանկարները: Այս միւստիկ հարցերը դեսպանը առանձնաբար քննարկած է նաեւ **ՏԻՏԻՆՈՒԹԻՅՈՒՆ** եւ **ՕՐԵՍՏԻՍ-ԴԱՅԻ** քաղաքապետներուն հետ:



ՓԵՐԻՍԹԵՐԻԻ (Աթէնք) Ս. Աստուածածին եկեղեցույ (Էջմիածնական թեմ) սրահէն ներս, 29 Մայիսին, կատարուած է հայաստանաբնակ լրագրող Սազօ Արեանի «**Բաժնուած կղզին**» հարցազրոյցներու գիրքին ներկայացումը: Այս առթիւ, միաժամանակ, ցուցադրուած է Կիպրոսի մասնատումին ու ատոր առնչակից քաղաքական եղելութիւններուն վերաբերող հայերէն վաւերագրական տեսերիկ մը (պատրաստուած՝ Վահագն Ղազարեանի կողմէ): Ձեռնարկին սկիզբը նախ խօսք առած է Յունաստանի թեմի առաջնորդ Խորէն Եպս. Առաքելեան, որ գնահատանքով արտայայտուած է Սազօ Արեանի լրագրողական ու հեղինակային գործունեութեան մասին: Այնուհետեւ խօսքը տրուած է Արեանին, որ խօսած է գիրքին ու անոր զուգահեռ ժապաւենին ստեղծման պատմութեան մասին: Ան յատկապէս լուսարձակի տակ առած է 1974-ի թրջական գրաւումին հետեւանքով կիպրահայերու կրած նիւթական մեծ վնասներն ու տեղահան դառնալու դաժան փորձառութիւնը: Աւարտին, հեղինակը ներկաներուն համար մակագրած է իր գիրքը:



L. Շ.

ՀԱԿԱՍԱԿԱՆ, ՄԵՐԺՈՂԱԿԱՆ, ԹԷ՛ ԶՈՒԳԱՆԵՐԱԿԱՆ ՄՏՔԵՐ

Այն տեսութիւնը, որ՝ իրապաշտները զգացմունքներէ հեռու են, շատ սխալ հասկացողութիւն է: Իրապաշտները ընդհանրապէս զգացմունքները մէկ կողմ չեն դնել:



Ընդհակառակը, շատ կը յարգեն: Տրամաբանողներն են, որ կը մերժեն զգացմունքները եւ լրիւ հեռու են անկէ, եւ իրապաշտներուն հետ ընդհանրապէս կապ չունին:

ԽՈՐԷՆ ՓԻԼԱԴՅԵԱՆ (Հալէպ)

Շատ բաներ կան, որ տրամաբանական են, բայց իրապաշտ չեն: Իրապաշտը՝ տրամաբանութիւնն ու զգացմունքները հաւասարապէս իրար կը խառնէ, նայած որքան պետք է խառնուի այդ վիճակին մէջ:

Իրապաշտութիւնը ամենազոյալն է, որովհետեւ տրամաբանութիւնը եւ զգացմունքները պիտի միահիւսէ իրարու: Եթէ աշխարհը տրամաբանութիւն ըլլար, մենք լրիւ ուրիշ վիճակի մէջ կ'ըլլայինք: Բայց աշխարհը միայն տրամաբանութիւն չէ: Տրամաբանութիւնը շատ բան չեղեալ կ'ընէ, որ իրականութեան հետ կապ չունի:

Տրամաբանութիւնը համակարգ մըն է, որ կը գործածուի մտածելու ձեւի մը մէջ, որ երբեմն պետք է: Իրապաշտութիւնը եւս մտածելու համակարգ մըն է, որ կը գործածուի իր յատուկ տեղին:

Չզգացմունքայինը կամ ընդհանրապէս զգացականը դարձեալ մտածելակերպ մըն է, որ կը գործածուի կարգ մը տեղեր:

Հարունակութիւնը տեսնել էջ 4

«ՄԱՍԻԱ» - ՄԵՐ ԱՆԿԻԲԱԷՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՃՆՇՈՒՄՆԵՐԸ ԵՒ ԵՒՐՈՊԱՅԻ ԱՆՍԱԿԱՐԿ ԱԶԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Հրապարակուեցան Հայաստանի խորհրդարանական ընտրություններու վերջնական արդիւնքները, սակայն կը շարունակուին յետընտրական գործընթացները՝ ներքին ու արտաքին ճակատներու վրայ: Ընդդիմութիւնը քուէարկութիւնը կը նկատէ կեղծուած, հակառակ միջազգային դիտորդական անաքելութիւններուն կողմէ տրուած գնահատականներուն, որոնք ընդհանուր առմամբ դրական են:

Ընտրութիւններուն պարտութիւն կրած ընդդիմադիր ուժերուն կը ձայնակցի միայն Ռուսաստանը, որուն նախագահը մինչեւ այս պահը չէ շնորհաւորած Հայաստանի վարչապետը: Չարմանայի Է Մոսկուայի որդեգրած ժխտական վերաբերմունքը Հայաստանի ժողովուրդի մեծամասնութեան կամքի արտայայտութեան նկատմամբ, յատկապէս երբ պաշտօնական յայտարարութիւններ կը հնչեն ըսելու համար, որ «խախտուած են ազատ ընտրութիւններու ժողովրդավարական ընթացակարգերը»: Այստեղ կ'արժէ յիշեցնել, որ վերջին տասնամեակներուն Ռուսաստանի մէջ կայացած որեւէ ընտրութիւն մրցակցային բնոյթ չէ ունեցած, չէ արտօնուած ռեւէ ընդդիմադիր գործիչի մասնակցութիւնը նախագահական ընտրութիւններուն, գոյութիւն ունենալէ դադրած է անկախ մամուլը, խիստ սահմանափակուած է համացանցի հասանելիութիւնը ռուսաստանցի հասարակութեան, արգիլուած են Ֆէյսպուքը եւ ընկերային հաղորդակցութեան այլ հարթակները: Հետեւաբար, Հայաստանի ընտրութիւնները «ոչ-ժողովրդավարական» որակելը խիստ հեղական կը հնչէ ռուսական չափանիշներուն հետ համեմատած:

Պարզ է, որ ներկայիս Մոսկուան դժուարութիւն ունի հաշտուելու իրողութեան հետ: Ընտրութիւններէն ամիսներ առաջ ռուսաստանեան յայտնի ու անյայտ շրջանակները լծուած էին Հայաստանի իշխանութիւններու դէմ ապստեղեկութիւններ տարածելու աշխատանքին: Այս արշաւին յաջորդեց իրենց հնազանդ ուժերուն բացայայտ կերպով հովանաւորելը, ու այդ հարցով տասնեակ միլիոն տղարներու ներդրումը՝ Երեւանի մէջ գործող իշխանութիւնը տապալելու նպատակով: Այս բոլորին կողքին ականատես եղանք Քրեմլինի տեսակետները փոխանցող՝ բարձրաստիճան պաշտօնեաներու կողմէ ամենօրեայ յաճախականութեամբ հնչող սպառնալիքներու:

Երբ այս բոլորը ծախողեցան տկարացնելու Փաշինեանի դիրքերը, Մոսկուան անցաւ տնտեսական ճնշումներու քաղաքականութեան՝ ընտրութիւններէն շաբաթ մը առաջ արգիլելով հայկական բազմատեսակ արտադրանքներու մուտքը Ռուսաստան, յոյս ունենալով, որ այդ քայլերով կրնայ ազդել ընտրողներու տրամադրութեան վրայ:



Միւս կողմէ, հաւաքական Եւրոպայի չուշացաւ հասնելու Հայաստանի օգնութեան: Պայմաններ ստեղծուեցան, որպէսզի գիւղատնտեսական արտադրանքները անմիջապէս հասնին Եւրոպական երկիրներ՝ նիւթական օժանդակութիւն տրամադրելով այդ նպատակի իրագործման համար: Այժմ, Եւրոմիութիւնը Հայաստանի համար կը պատրաստէ աջակցութեան ծրագիր՝ ի պատասխան Ռուսաստանի կողմէ առեւտրային սահմանափակումներուն: Այս բոլորը կը կատարուին նկատի առնելով միմիայն այն, որ Հայաստան ընտրած է ժողովրդավարութեան ուղղութիւնը ու կը փորձէ բարեկամական յարաբերութիւններ վարել բոլորին հետ:

Մինչեւ 2020 թուականի 44-օրեայ պատերազմը Հայաստանի հասարակութիւնը կը նկատուէր ամենէն ռուսամտը՝

ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ (ԱՄՏ)

Նախկին Խորհրդային Միութեան ամբողջ տարածաշրջանին մէջ: Անկէ ասդին տրամադրութիւնները կամաց-կամաց սկսան փոխուիլ: Արցախի ժողովուրդի բռնի տեղահանութեան ընթացքին Ռուսաստան իր անգործութեամբ կամ լուռ մեղսակցութեամբ եկաւ կորսնցնելու հայութեան մօտ իր ունեցած ամբողջ վարկը:

Այդ թուականէն ասդին Հայաստանի նկատմամբ Մոսկուայի առած բոլոր քայլերը սխալ հաշուարկներու շղթայ մըն է, որ կը շարունակուի մինչեւ օրս: Ժամանակը եկած է որպէսզի Ռուսաստան վերատեսութեան ենթարկէ ներկայիս վարած իր քաղաքականութիւնը ու փորձէ վերականգնել իր յարաբերութիւնները՝ առաջին հերթին արժանանալով Հայաստանի հանրութեան վստահութեան, քանի որ սպառնալիքներու ու ճնշումներու վրայ հիմնուած քաղաքականութիւնը արդէն իսկ փաստած է իր ձախողութիւնը:

ԽԱԶԲԱՌ- 85

10x10 grid for crossword puzzle 85 with some cells shaded black.

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ

- 1) Սպիտակամիշ ոտքերով ձի:
2) Ռոսի կենդանի - Մովսէսի քաղաքներէն - Գեղմ:
3) Նմանաձայն տառեր - Ծխախոտ գործածել - Կրկնուած բաղաձայններ:
4) Գոմ, փարախ:
5) Մեծ քաղաք - Բաղնիքի մէջ սպաննուած ֆրանսացի յեղափոխական:
6) Աղօտ, անշուք - Խոնավ, թաց:
7) Ափրիկեան երկիր:
8) Դրկից գիրեր - Արագ շնչառութիւն (հակ.) - 12 ամիս:
9) Ուրիշ - Ածականակերտ մասնիկ - Իգական օտար անուն:
10) Նախնիք:

ՈՒՂՈՎԱՅՅԵԱՑ

- 1) Գլխաւոր:
2) Խաղողի տունկ - Կրկնուած տառեր - Ետին դարձած՝ որոճացող կենդանի:
3) Այբուբենէն - Մատի մուտ օայր - Իրերայաջորդ գիրեր:
4) Հիմնու սիրոյ աստուածը (հակ.):
5) Երախայրիք, նախապտուղ - Գետի ծանծաղուտ (հակ.):
6) Գիւղացիի կօշիկ - Շրջ. դատարան:
7) Ամուսնական զոյգ (հակ.):
8) Լեզուով մը՝ այր՝ - Վիշնու աստուծոյ եօթներորդ մարմնացումը - Եական բայէն:
9) Համադասական շաղկապ - Այբուբենէն - Կտ՝ փլատակ:
10) Չոյգ տոմար:

ՊԱՀՈՒԱԾ ԲԱՌ- 87

Large grid for crossword puzzle 87 with letters already filled in.

ՄԹԵՐՔ ՄԻԱԲՈՐ ՄԻՆԱԿ ՄՂՈՒՄ

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՅՈՒՇԱՐԱՐ ՅՍԱԿԿ

ՆԱԵԻ ՆԺԱՐ ՆԻԻՄ ՆՇԱՆ ՆՈՒԱԼ ՆՈՒԱՂՈՒՄ ՆՈՒԱՍՏ

ՍԱՌՆԱՄԱՆԻՔ ՍԱԲԱՌՆԱԿ ՄԻՍԵՌ ՍՄԲՈՒԼ ՍՈՒՍԵՐ ՍՊԻՏ ՍՏԱԿ ՍՏԵԻ (2) ՍՔԱՆՉԱՑՈՒՄ

ՏԱԿԱԻՆ ՏԱՐՄ ՏԿԼՈՐ ՏՈԿՈՍ ՏՈՂՄ ՏՔՆԱԶԱՆ

ԱԺԱՆ (2) ԱՆԳԱՄ ԱՆԳՐԻ ԱՆԻՄԱՍՏ ԱՍՈՒՆ ԱՐԲԵՒՌ ԱԻԵԼ (2)

ԴԱՍՏԱԿ ԴԵՐՈՒՄՈՅՑ ԴԺԿԱՄԱԿԻԼ ԴՇԽՈՅ ԴՈՒՆՉ ԴՈՒՐԾ ԴՈՆՓԱԿ

ԻՇԱՅՐ ԻՇԱՊԱՆ ԻՇՂԱՐ ԻՍԿՈՅՆ

ԾԵՐԱՆԱԼ ԾԵՐԱԿՈՅՑ ԾՈՎԱՆԿԱՐ

ԼԱԻԱՆԱԼ ԼԵԱՑՈՒՄ ԼՈՒՍԱԲՈՐԲ

ԽԱՌՆԱԿ ԽԼԵԱԿ ԽՄԱՆ ԽՆԱՄԱԿԱԼ ԽՆԱՄԻ ԽՈՐԱՉԱՓ ԽՍԻՐ

ԿԱՍԿ ԿԱՐԱՊ ԿԵՐՊԱՍ ԿՈԼՈՏ ԿՈՂՄ ԿՍՄԻԹ ԿՏՐՈՒԿ ՄԱՅՐ (2) ՄԱՆՐ (2) ՄԱՏԱԿ ՄԱՏԱՆԻ

ԳԱՅԼԻԿ ԳԵՂԱՁԱՐԴ ԳԵՂԱՆԻ ԳԵՐԱՆԳԻ ԳԾԻԿ ԳՈՒՍԱՆԱԿԱՆ ԳԱԼԱՐԻՔ

ԺԱՆՏԱՏԵՍԻԼ ԺԱՌԱՆԳԱԲՈՐ ԺԵՌՈՒՏ ԺԺՄԱԿ ԺԽՏԱԿԱՆ ԺՊԻՐՀ ԺՐՈՒԹԻՒՆ

ԽԱՂԻՆ ՕՐԵՆՔԸ. - Բառերը կրնան կարդացուիլ տարբեր ուղղութեամբ՝ հորիզոնական, ուղղահայեաց եւ շեղակի: - Միեւնոյն տառը կրնայ գործածուիլ մէկէ աւելի բառերու մէջ: - Դիւրութեան համար սկսիլ երկար բառերը գտնելով: Պահուած բառը (7 տառով)՝ ԺԱՄԱՑՈՅՑԻ ԿՇՈՈՑ

ՊԱՀՈՒԱԾ ԲԱՌ- ԹԻԻ 86-ԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ՝ ՏՀՈՏ

Պահուած բառին եւ խաչբառին պատասխանները տեսնել խաղերու յաջորդ թիւով

ԽԱԶԲԱՌ- ԹԻԻ 84-ԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

10x10 grid for crossword puzzle 84 with letters already filled in.

ՅՈՒՇԱԳՐԱԿԱՆ-ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ «ԿԵՆ ԴԱՆԱՅՈՒՄ»-Ի ԿԱՐԳՈՎ

Կա կը պարտի իր այն տեսիլներուն ու հեռանկարներուն, որոնցմով ան ինքզինք պահած է աներեր, անտեղիտալի, անդրդուելի, անզիջող եւ անյողողոյ միանգամայն:

Այս ամփոփ, բայց անհրաժեշտ գրառումով կ'ուզեմ լոյս սփռել խաւարի հասնող ու հաւասարող, խիստ կենսական ու հիմնարար երեւոյթ-թղթածրարի մը վրայ, որ կ'առնչուի հայ ժողովուրդի պատմութեան այն հատուածներուն հետ, որոնք գեթ քանի մը տասնամեակներու «անցեալ» ունին, բայց կը նկատուին մեր պատմութեան այն էջերը, ուր «ներկան» ինքզինք կը խօսեցնէ, կ'աղաղակէ, կը պահանջէ կամ կը պարտադրէ:

Շատ հեռու պիտի չեղբամ այս ընդգծումով, այլ պիտի փորձեմ «տող»եր իրենց տեղը դնել, որովհետեւ անոնք անմիջական անդրադարձներու, ասարմներու եւ գարգացումներու... կենդանի պատկերներն են իրենց դրական ու ժխտական, բարոյական ու խրատական թեգերով, երանգներով, ծալքերով ու կողմերով, ցոյց տալով, թէ արդի շէջող իրականութիւնը, իր խամրող ու կենդանապահ կեանքով, չի կրնար մէկ օրէն միւսը դառնալ լուսանցքային կամ ստուերային, պարզ այն գիտակցութեամբ ու տրամադրութեամբ, որ հայ ժողովուրդը երբեք այդ ընթացքով եւ ակիբով չէ գոյատեւած, ոչ ալ ինքզինք նստած է ակեղծող ու փոթորկող մահացու իրավիճակներու մէջ:

Մեր դիտարկումը եւ ակնարկումը այս պարագային կ'երթայ ու կը կեդրոնանայ հետեւեալ հիմնակետին վրայ, որ, իրօք, ոչ միայն հրատապ է, այլեւ խիստ պահանջատիրական:

Մեր պատմութիւնը, իր հրատապ թէ մօտիկ գրառումներով, տեղեկագրութիւններով, բացատրագրութիւններով, արձանագրութիւններով, նկարագրութիւններով, վկայագրութիւններով, իրաւացիութեամբ թէ առարկայագրութեամբ, կամ յարակից գործառնութիւններով, զո՞նք է, արդարացնող է, համոզող է, ընդունելի՞ է, թէ՞ անոնք հաւաքուած են, կազմուած, ամփոփուած ու հրապարակուած, ըստ կամու կամ ըստ... ապապարնքս:

Այնքան ատեն որ Սփիւռքը չունի իր ակադեմիական, գիտական ու պատմական մակարդակներով հիմնարկներ կամ հաստատութիւններ, հետեւաբար հայ պատմագրութիւնը կը մնայ այս կամ այն անձի մը, տիրոջ մը կամ կողմի մը ԱՆՁՆԱԿԱՆ տեսողութեան, չափանշութեան կամ օրակարգութեան սահմաններուն մէջ, ասոնք կրնան, ի վիճակի՞ են յուշագրական, պատմագրական ու վաւերագրական հրատարակութիւններ նկատի առնուիլ, երբ պատմագիտութիւնը, թափանցիկութիւնը, իրապաշտութիւնը, վաւերականութիւնը կրնան «հարցականներու» տեղի տալ իրենց ճՃՄԱՐՏԱՆՕՍԱԿԱՆ եւ ՈՒՂՂԱՆՕՍԱԿԱՆ տուեալներով, քանի որ նման մօտեցումներով արժանի չեն ըլլար հաւաստիութեան, պատմալուստագրութեան ոգիին եւ չեն կրնար ծառայել իրենց նպատակներուն ու ծրագրերուն, վերածնունդով թիւր ու դիւրաբեկ հրատարակութիւններու:

Բնական է, երբ կը խօսինք կամ կ'անդրադառնանք նման «խստապահանջական» սկզբունքներով աշխատանքներու լոյս ընծայման, որոնց կիրարկումը, որոշապէ՛ս, խիստ անհրաժեշտ է, նկատի կ'ունենանք նաեւ, անպայմանօրէ՛ն, ժամանակակից (գեթ հարիւր կամ ասելի տարիներու) յուշագրութեան պատմագրութիւնները, ինչպէս, ազգային կառոյցներու, միութեանական կեդրոններու, մարզական խմբաւորումներու, հայրենակցական միաւորներու, սկսուողական շարժումներու, կրթական ցանցերու, համայնքային պատկանելիութիւններու, կուսակցական կազմակերպութիւններու, մամլոյ հրատարակութիւններու, բարեսիրական հիմնարկութիւններու, եկեղեցական խորհուրդներու, երիտասարդական կազմերու, գեղարուեստական գործունէութիւններու եւ այլ նմանօրինակ հաւաքներու, որոնք բոլորն ալ, անհատական թէ հաւաքական ներդրումներով, ներբերումներով թէ ներկարգերով, ծառայած են իրենց հօտերուն, շրջանակներուն, գաղութներուն, քնակցութիւններուն, Նոր Երեսնդներու դաստիարակչական գործերուն, միով բանիւ, այն բոլոր կայքերուն, որոնք լոյս կը սփռեն, կը տեղեկագրեն, կը վերջիջեցնեն, կը նկարագրեն, կը փոխանցեն եւ ընդհանրապէս կը պատմագրեն ու կը վկայագրեն համապատասխան (ինչպէս վերոյ յիշուեցաւ) հայապահպանումի իւրաքանչիւր հիմնասիւնի պատմութեան մասին՝ իր ճիւղատրուումներով, շերտերով, ընթացքներով, հատուածներով կամ հոսանքներով:

Շարունակութեամբ էջ 2-էն

Չենք տարակուսիր, որ այս ուղղութեամբ կան, եղած են հրատարակումներ, սակայն արդեօք բոլորն ալ ամբողջական են, հաւաստիական, վաւերագրական, պատմագիտական արժեքափերով համալրուած, Նոյն տրամաբանութեամբ, արդեօք բոլորը գրառած են իրենց պատմութիւնները, գեթ ԿԱՏԱՐԵԱԼ բովանդակութեամբ, կը կասկածիք, որովհետեւ խօսքը չի վերաբերիր կիսատ կամ ցիրուցան յուշագրութիւններուն:

Կարելի՞ է ներողամտութեամբ բացատրել կամ արդարացնել այդ ձգձգումները կամ կաղաքումները, մանաւանդ այն գաղութներուն պարագային, որոնք «փոքր Յայաստան»ի դերակատարութիւններով, հսկայական աշխատանքներ կատարած են (ու կը կատարեն), հետեւաբար ներելի չէ, որ անոնք «տժգոյն պատմուած»ներու մէջ մնան, երբ այնքան փայլուն, հպարտացնող, յուսարդող, զօրակցող եւ յարատեւող առաքելութիւններով գործած են եւ, այսօր իսկ, կը մնան այդ յանձնառութիւններուն նուիրեալները:

(Անաչառ ըլլալու համար, դիտել տանք, թէ կարգ մը շրջանակներ (ոչ-մեծաթիւ), իրենց կոչումներուն հաւատարիմ, յուշագրութիւններով հանդէս եկած են, իրենց կարողութիւններու համեմատութեամբ, իրօք, արժանի գնահատումով):

Անշուշտ, երբ կ'արտայայտուինք այս «ՏԱԳՆԱԳՈՏ» հարցին մասին, շատեր պիտի առարկեն, որ նման ծրագրեր յաջողցնելու համար (այլապէս շնորհակալ) պիտի յիշեն «անպատեհութիւն»ներ, որոնք համարեա անկարելի (՞) կը դարձնեն զանոնք գործարդելը, գլխաւորաբար նկատի ունենալով.

- Նիւթական անբաւարարութիւն կամ չգոյութիւն
 - Մասնագետ հեղինակութիւններու բացակայութիւն
 - Յովանաւորներու անպատրաստութիւն կամ չկամութիւն
 - «Յետաքրքրուող եւ ընթերցող չկայ»ի առարկութիւն
 - Ունակ ալ անտարբերութիւն ու հակուրութիւն
- Թերեւս այս «պատճառաբանութիւններ»ը, ԻՆՉ-ՈՐ տեղ մասամբ արձանագրելի կամ նկատառելի ըլլան, բայց ՈՉ-ԼՐԻԻ համոզիչ, քանի որ մեր պատմութիւնը վկայ, ինքզինքը դարձն սկսեալ, անցնելով միջնադարէն մինչեւ յաջորդական դարաշրջաններ, հասնելով Յայաստանի Գ. Յանրապետութեան ու վաղ սփիւռքաշրջան, ինչպէ՛ս հայ մտքի շնորհապարտներ եւ երախտարներ, անմահներ ու տեսլապաշտներ, կրցած են մեզի կտակել ԾՈՎ պատմագրութիւն, գրականութիւն, բանահիւտութիւն, քնարերգութիւն, դիւցազներգութիւն, յաջորդները՝ բազմաստե ստեղծագործութիւններ, իսկ ասելի յաջողները՝ Նոյնքան հարուստ բանաստեղծական արուեստներ ու վիպական գործեր, մինչ ուրիշներ, այլազան գրաստներով, պատմաբերներով եւ յուշագրութիւններով ճոխացուցած են հայ մտքի ու գրիչի աշխարհը:

Յետեւաբար, այն չքմեղանքները, որոնք այս կամ այլ առիթներով կը պարզուին (ինչպէս վերոյ ակնարկեցի), յումպետս պատրուակներ են, եւ կարելի չէ անոնց վրայ հիմնուելով հայ ժողովուրդը «զրկել» իր այն պատմութեան, որոնք իրն են, իր հեռաւոր թէ մօտիկ նախնիներէն իրեն ժառանգուած, ուստի, բարդութեան պատրուակներով պետք չէ գոհանալ, ոչ ալ պահուելով մատներու ետին:

Վերջին հաշուով, եթէ այս կամ այն շարժառիթներով մեր պատմագրութիւնը, յուշագրութիւնը, վաւերագրութիւնը, կենսագրութիւնը կամ ինքնագրութիւնը պիտի զլացուին հետագայ սերունդներուն եւ առհասարակ հումայն հայութեան, այլապէս ալ պիտի մոռցուի, այն ատեն վա՛յ է եկեր մեր գոյութեան, ապա ուր կը մնայ ազգային արժանապատուութիւնը:

Յետեւաբար այս «հաստափոր» թղթածրարը բացուեցաւ (ոչ իր լրիւ տարբերակներով), ժամ է, որ պատկան կողմեր ձեռնարկեն (կամ ամբողջացնեն) իրենց կեցութեան ու գոյութեան պատմութիւնը ԿԵՆ ԴԱՆԱՅՈՒՄԵՆԸ, յուշագրական-գրականութեան լիարժեքութեան մը յաւերճացումով:

Անհիմն եւ անտեղի պատճառաբանութիւնները չեն որ պիտի արգելակեն յուշագրութեան «ծննդոց»ները, ոչ ալ մտայնաշունչ... ուրուականները, քանզի մատուցուելիքը, ինչպէս երեկուան, նաեւ այսօրուան ու վաղուան պայծառ հեռանկարի մը ՊԵՏՄԱՆԱԳՐԱԿԱՆ իրականութիւնն է, պէ՛տք է ըլլայ:

Ծանօթ.- Առաջին առիթով, կը խոստանամ, այս մասին երկու կենդանի յուշերով հանդէս գալ:

Շարունակութեամբ էջ 2-էն

Այս պարագային անհատի հայեցողութեան կախեալ է որոշումը:

Վերջ ի վերջոյ, դուն մարդ ես եւ իրաւունք ունիս ազատ ընտրութեան: Ո՞ր գաղափարախօսութիւնը քեզի համար հոգեհարազատ է եւ կը զգաս, որ դուն այդ դպրոցին կը պատկանիս՝ այնտեղ է որ կրնաս յառաջդիմել եւ ստեղծագործել:

Այս է այսօրուայ աշխարհը. Գնա՛, ընտրէ՛ ինչը որ կ'ուզես, ուր որ կ'ուզես: Այս է ազատականութիւնը, ճիշդն ալ այս պետք է ըլլայ, ըստ ինծի:



ARARAD DAILY NEWSPAPER

Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael Beirut | Lebanon | www.araraddaily.com email: araradoratert@gmail.com

ارارات جريدة يومية أرمنية
تصدر عن شركة ماسيسر للملحة والصحافة (ش.م.م.)

ՔԱՎԱՆԱՅԱԿԱՆ (ԱՐԵՂԱՅԱԿԱՆ) ՁԵՌՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՕԾՈՒՄ ՄԱՅՐԱՎԱՆ-ՔԻՆ ՄԷՋ

Նախագահութեամբ եւ օրհնութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՅԱՓԱՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Շաբաթ, 20 Եփրակի, 21 Յունիս 2026-ին, Մայրավանքի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պիտի կատարուի քահանայական (արեղայական) կոչման արարողութիւն եւ ձեռնադրութիւն ու օծում:

Ձեռնադրիչ եւ քարոզիչ **ԳԵՐՇ. Տ. ԿՈՍԻՏԱՍ ԱՐԵ. ՕՅԱՆԵԱՆ** (Կաթողիկոսական փոխանորդ Կիպրոսի Յայոց թեմին)

Քահանայ (արեղայ) պիտի օծուին Դպրեվանքի աշակերտներէ՝ **ԲԱՐՇ. ՅՈՎՀԱՆՆԵՍ ՍՐԿ. ՊԱՅՏՈՒՆԵԱՆ** ԲԱՐՇ. ԱՐԲԱՄ ՍՐԿ. ՊԱՅՏՈՒՆԵԱՆ

Կոչման արարողութիւնը տեղի պիտի ունենայ Շաբաթ, 20 Յունիսի երեկոյեան ժամը 6:00-ին, իսկ օծումը՝ Կիրակի, 21 Յունիսի առաւօտեան ժամը 9:30-ին: Աղօթակից ըլլանք Նորընծայ հայր սուրբերուն, որպէսզի իրենց կոչումին մէջ հաստատ մնան եւ պտղաբեր դառնան իրենց ծառայական կեանքին մէջ:

ԴԻՄՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

Այս դժուար պահերուն, մեր Դարձանատունը կը շարունակէ կարիքաւորին կողքին կանգնիլ: Այսօր մենք ձեր աջակցութեան պէտք ունինք՝ մեր առաքելութիւնը շարունակելու համար:

Կրկն անհրատուութիւն կատարել
Whish հաշիւով եւ օգնել մեզի որպէսզի շարունակենք խնամք եւ անհրաժեշտ ծառայութիւնները մատուցելու մեր գաղութին:

Իրաքանչիւր ներդրում, ինչքան ալ փոքր ըլլայ, նպատակն է ձեր ծառայել:

Միասին կրնանք յոյսը վառ պահել:

Whish MONEY 71/356035

Շնորհակալութիւն Ձեր ազ նուրութեան եւ օժանդակութեան համար:
Միասին անելի զօրաւոր ենք:

Հ.Կ.Մ. ԴԱՐՄԱՆԱՏՈՒՆ ԸՆԿ. ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆ

Դարձանատունը բաց է ամէն օր ստուտան մտքը 9:00-էն մինչեւ կէսօրը, եւ ժամը 3:00-էն մինչեւ 5:00-ը:

Ձեր ուշադրութեան կը յանձնենք նաեւ թէ դիպարակ բաց է նաեւ նոյն ժամանակ:

Երկուշաբթի

- Բժշ. Յակոբ Գլինեան - Ատամնաբոյժ
- Բժշ. Անի Երկանեան - Մանկաբոյժ

Երեքշաբթի

- Բժշ. Բրիտ Կարպետեան - Ատամնաբոյժ
- Բժշ. Ռաֆֆի Փոլատեան - Գեղձային հիանդութիւններ
- Կարօ Աւեսեան - Ֆիզիքական բուժում
- Բժշ. Մարալ Պոլատեան - Հոգեբան

Չորեքշաբթի

- Բժշ. Յարութ Տէմիրեան - Ուկրաբոյժ
- Բժշ. Յակոբ Գլինեան - Ատամնաբոյժ
- Մարիլին Աուն - Սննդաբան

Հինգշաբթի

- Բժշ. Բրիտ Կարպետեան - Ատամնաբոյժ
- Կարօ Աւեսեան - Ֆիզիքական բուժում
- Բժշ. Իրինա Արբանեան - Ծննդաբանութեան եւ կանանց հիանդութիւններ
- Բժշ. Միսակ Արբանեան - Վիրաբոյժ
- Բժշ. Մարալ Պոլատեան - Հոգեբան

Ուրբաթ

- Բժշ. Յակոբ Գլինեան - Ատամնաբոյժ
- Բժշ. Անի Երկանեան - Մանկաբոյժ
- Բժշ. Միսակ Արբանեան - Մուրաբան

Շաբաթ

- Բժշ. Միւսել Խօնջար - Քիթ, կոլորի, ականց
- Բժշ. Լի-Քոնի Քոլատեան - Ընդհանուր բժշկութիւն
- Բժշ. Բրիտ Կարպետեան - Ատամնաբոյժ
- Բժշ. Յակոբ Գլինեան - Ատամնաբոյժ

@aebu.org @aebumedicosocialcenter 01 560 704 / 71 356 035

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Այսուհետեւ կրնաք օգտուիլ Առողջապահական Ապահովագրութենէն (Medical Health Insurance) մեր դարձանատան միջոցով սերտուած գիններով ինչպէս նաեւ վճարումի դիւրութիւններով:

Յաւելեալ մանրամասնութիւններու համար կը խնդրուի հեռաձայնել հետեւեալ թիւերուն՝ 01/560 704 եւ 71/356 035

ՀԱՎԱՍԱԿԱՆ, ՄԵՐԺՈՂԱԿԱՆ, ԹԵ՛ ԶՈՒՎԱԶՆՈՒԿԱՆ ՄՏՔԵՐ

Չես կրնար գատել իրարմէ, բոլորն ալ պէտք են տարբեր-տարբեր վիճակներու մէջ, նայած թէ ինչ է նպատակը եւ ինչ են շահերը:

Մարդ արարածը իր սիրածին հետ չի կրնար տրամաբանութեամբ խօսիլ, այլ՝ զգացումով կը մօտենայ: Նոյնպէս պէ գործին մէջ՝ չի կրնար զգացական վարուիլ, պէտք է ամբողջութեամբ տրամաբանութեամբ մօտենայ, քանի որ այստեղ գործը թիւերու հետ է:

Իսկ եթէ մարդը իր կեանքին հետ կապուած որոշում մը պիտի կայացնէ, ապա զգացականը պիտի միախառնէ տրամաբանութեան հետ, որպէսզի կարողանայ լաւ եւ ճիշտ արդիւնքի հասնիլ:

Տրամաբանութիւնը կ'ըստ, որ դուն գիտ մը ըրիր եւ հնարեցիր դեղ մը, որ մարդուն առողջութեան համար պէտք է, եւ քեզմէ բացի ոչ ոք ունի այդ դեղը, ուստի դուն ուզածդ գինը կրնաս խնդրել:

Չզգացականը կ'ըստ՝ չէ դուն միակ անձն ես, որ այս դեղը ունիս, պէտք է բոլոր մարդիկը բուժես՝ ինչ ալ ըլլայ գինը:

Իրապաշտը կ'ըստ, որ դուն դրամագլուխ ունիս՝ դուն ալ պիտի ապրիս: Դուն բան մը հնարեցիր, որ ուրիշը չկարողացաւ, դեղ գտար, իրաւունքը է վարձատրութիւնը՝ դրամը: Բայց միեւնոյն ատեն մարդոց ալ տնտեսական վիճակը նկատի պէտք է առնես: Ինչո՞ւ, դարձեալ քու անձնական շահերուդ համար:

Եթէ աժան վաճառես եւ եթէ ասելի աժան՝ քու սահմանած անքանական գիներ, շատ ասելի մարդ պիտի կարողանայ գնել եւ դուն ասելի վատակաճ կ'ըլլաս: Վերջաւորութեան իրապաշտութիւնը քու շահերուդ շատ կը ծառայէ: